«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2016թ.

# Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........ 1
Ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ........ 2
Ամփոփ համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ........ 3
Ամփոփ համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ........ 4

## *ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և վերջինիս դուստր ձեռնարկությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից: 2017թ. մարտի 27-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

### *Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից *«Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր»* աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

*«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ*
*ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, «ՆՈՐԴ» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ*
*Հեռ.՝(37460)652165, ֆաքս՝(37410)501341, www.pwc.com/am*

*ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)*

***Եզրակացություն***

Մեր կարծիքով, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Խմբի՝ աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC

16 հունիսի 2017թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ*
***Ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն***

| *մլն. ՀՀ դրամ* | **31 դեկտեմբերի 2016թ.** | **31 դեկտեմբերի 2015թ.** |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 318,487 | 322,577 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 9,197 | 9,551 |
| Ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր | 3,235 | - |
| Տրամադրված փոխառություններ | 91 | 116 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 12,657 | 13,165 |
| Շահութահարկի գծով ոչ ընթացիկ կանխավճարներ | 686 | 686 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 369 | 416 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **344,722** | **346,511** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 14,692 | 16,320 |
| Տրամադրված փոխառություններ | 393 | 222 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 56,743 | 76,874 |
| Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար | 276 | 269 |
| Ժամկետային ավանդներ | 20,274 | 615 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 20,962 | 14,971 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **113,340** | **109,271** |
| **Ընդամենը ակտիվներ** | **458,062** | **455,782** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 327,596 | 327,596 |
| Լրացուցիչ կապիտալ | 265 | 265 |
| Կուտակված վնաս | (94,017) | (95,683) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **233,844** | **232,178** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 34,598 | 37,350 |
| Պետական շնորհներ | 321 | 359 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **34,919** | **37,709** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 136,085 | 137,791 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 53,214 | 48,104 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **189,299** | **185,895** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **224,218** | **223,604** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | **458,062** | **455,782** |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2017թ. մարտի 27-ին:

Հրանտ Թադևոսյան
Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն

Արմեն Ոսկանյան
Գլխավոր հաշվապահ

*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ*
***Ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն***

| *մլն. ՀՀ դրամ* | **2016թ.** | **2015թ.** |
|---|---|---|
| Հասույթ | 223,685 | 235,130 |
| Վաճառքի ինքնարժեք | (195,779) | (210,727) |
| **Համախառն շահույթ** | **27,906** | **24,403** |
| Այլ գործառնական եկամուտ | 4,098 | 1,384 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (13,104) | (14,009) |
| Այլ գործառնական ծախսեր | (4,441) | (4,292) |
| **Գործառնական շահույթ** | **14,459** | **7,486** |
| Ֆինանսական եկամուտ | 4,593 | 942 |
| Ֆինանսական ծախսեր | (16,864) | (20,167) |
| **Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը** | **2,188** | **(11,739)** |
| Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում | (522) | 990 |
| **Տարվա շահույթ/(վնաս)** | **1,666** | **(10,749)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **1,666** | **(10,749)** |

| *մլն. ՀՀ դրամ* | Խմբի սեփականատերերին վերագրելի Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.** | **316,596** | **-** | **(84,934)** | **231,662** |
| Կանոնադրական կապիտալի փոփոխություն | 11,000 | 265 | - | 11,265 |
| Ընդամենը 2015թ. համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | (10,749) | (10,749) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **327,596** | **265** | **(95,683)** | **232,178** |
| Ընդամենը 2016թ. համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 1,666 | 1,666 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.** | **327,596** | **265** | **(94,017)** | **233,844** |

| *մլն. ՀՀ դրամ* | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը | 2,188 | (11,739) |
| Ճշգրտումներ. | | |
| Մաշվածություն | 12,480 | 12,199 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում | 414 | 201 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում | (75) | (97) |
| Տրամադրված փոխառությունների դուրսգրում | - | 1,370 |
| Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս | 35 | 169 |
| Շնորհված հիմնական միջոցներից եկամուտ | (38) | (56) |
| Փոխարժեքային տարբերություններից զուտ (եկամուտ)/վնաս | (1,088) | 3,765 |
| Տոկոսային եկամուտ | (2,991) | (942) |
| Տոկոսային ծախս | 16,864 | 17,212 |
| Եկամուտ առևտրային կրեդիտորական պարտքերի հրաժարումից | (5) | (18) |
| Պահուստների փոփոխություն | 342 | (22) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները** | **28,126** | **22,042** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում/(աճ) | 15,890 | (13,748) |
| Պաշարների նվազում/(աճ) | 1,329 | (2,727) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ | 112,421 | 152,943 |
| **Շրջանառու կապիտալի փոփոխություններ** | **129,640** | **136,468** |
| Վճարված շահութահարկ | (7) | - |
| Ստացված տոկոսային եկամուտ | 1,087 | 555 |
| Վճարված տոկոսներ | (10,531) | (9,035) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր** | **148,315** | **150,030** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (9,215) | (10,214) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 34 | 52 |
| Դուստր ձեռնարկությունների օտարումից մուտքեր, օտարումից զուտ կանխիկ | - | 499 |
| Ժամկետը լրացած ավանդների մարում | 27,795 | 8,150 |
| Նոր ավանդների տեղաբաշխում | (47,196) | (407) |
| Տրամադրված փոխառություններ | (242) | (3,945) |
| Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից | 181 | 3,964 |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(28,643)** | **(1,901)** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Մուտքեր նոր բաժնետոմսերի թողարկումից | - | 11,265 |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | 137,733 | 107,936 |
| Վարկերի և փոխառությունների մարում | (251,316) | (265,472) |
| **Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(113,583)** | **(146,271)** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (98) | (98) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին** | **14,971** | **13,211** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **20,962** | **14,971** |